

**5.22. Կոյուղու համակարգը և կեղտաջրերի մաքրման կառույցները 2000թ. հունվարի 1-ի դրությամբ**

Ըստ կոյուղու համակարգի շահագործմամբ և հոսքաջրերի մաքրմամբ զբաղվող կազմակերպություններից ստացված վիճակագրական ամփոփ հաշվետվային տվյալների, 2000թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության բոլոր քաղաքները և գյուղական վայրերի 2.4% ապահովված են եղել կոյուղով: Կոյուղու փողոցային ցանցի միագիծ երկարությունը 1995թ.-ի համեմատ պակասել է 132.9 կմ-ով (6.0%) և կազմել է 2092.2 կմ: Հանրապետության քաղաքների կոյուղու փողոցային ցանցերի միագիծ գումարային երկարությունը կազմել է 1902 կմ /Համեմ., քաղաքների փողոցների երկարությունը կազմել է 3169 կմ/: Երևան քաղաքի բոլոր փողոցների 807 կմ երկարության դեպքում կոյուղու փողոցային ցանցի միագիծ երկարությունը կազմել է 399 կմ (49.4%): Անհրաժեշտ է նշել, որ հանրապետությունում վերջին տարիներին կոյուղու աշխատանքները գնալով վատանում են: Այսպես, 1991թ.-ի համեմատ 74.2%-ով (439,9 մլն. խոր. մետրով) պակասել է կոյուղիով բաց թողնված կեղտաջրի քանակը, իսկ 1995թ. համեմատ՝ 55.6%-ով (190,8 մլն. խոր. մետրով): Երևան քաղաքում այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 72.8% և 50.8%:

Պակասել է նաև կոյուղու մաքրող սարքավորումներով բաց թողնված կեղտաջրերի քանակը: 1991թ.-ի համեմատ այն նվազել է 58.7%-ով, իսկ 1995թ. համեմատ՝ 40.4%-ով /Երևան քաղաքում՝ համապատասխանաբար 53.7 և 35.6%-ով/:

**Կոյուղու տնտեսության վիճակի մի քանի բնութագրիչները 1991, 1995 և 1999թթ.**

	1991	1995	1999
Գլխավոր կոլեկտորների միագիծ գումարային երկարությունը, կմ	847.8	987.2	1092.8
որից՝ Երևանում	220.1	220.1	220.6
Կոյուղու փողոցային ցանցի միագիծ երկարությունը, կմ	1927.2	2225.1	2092.2
որից՝ Երևանում	398.4	400.6	398.8
Կեղտաջրերի բաց թողնումը, մլն.խոր.մետր/տարի	592.5	343.5	152.7
որից՝ Երևանում	362.2	200.5	98.5
Մաքրող սարքավորումներով բաց թողնված կեղտաջրերի ծավալը, մլն. խոր.մ/տարի	316.6	219.3	130.7
որից՝ Երևանում	217.2	156.0	100.5
Մաքրող սարքավորումների սահմանված գումարային հզորությունը, հազ. խոր.մ/օր	955.6	978.6	922.2
որից՝ Երևանում	600.0	600.0	600.0
Մաքրող սարքավորումներով կեղտաջրերի բաց թողնման %	53.4	63.8	85.6

**Կոյուղու տնտեսության 1999թ. աշխատանքի հիմնական ցուցանիշները ըստ մարզերի**

	Միագիծ երկարութ յունը, կմ		Մաքրող սարքավոր ումների սահման ված արտադրական հզորությունը, հազ. խոր. մ/օր	Կոյուղի բաց թողնված կեղտաջրերը, մլն. խոր. մետր/տարի	Մաքրող սարքավորումներով բաց թողնված կեղտաջրեր		Առանց մաքրման հեռացվող կեղտաջրեր, մլն. խոր, մ/տարի
	գլխավոր կոլեկտորի	կոյուղու փողոցային ցանցի			ընդամենը, մլն. խոր. մ/տարի	%-ով կեղտա ջրերի ծավալից	
Ընդամենը	1092.8	2092.2	922.2	152.7	130.7	85.6	17.4
այդ թվում՝							
Երևան	220.6	398.8	600.0	98.5	100.5	102.0	3.8
Արագածոտն	48.9	106.2	10.0	1.6	1.0	62.5	0.6
Արարատ	95.8	146.0	53.0	3.1	1.4	45.2	1.7
Արմավիր	74.2	222.9	64.0	6.9	4.8	69.6	0.2
Գեղարքունիք	134.1	115.0	8.0	2.5	0.9	36.0	0.8
Լոռի	131.9	242.2	45.0	9.7	8.4	86.6	1.3
Կոտայք	146.8	323.3	65.0	12.8	5.2	40.6	-
Շիրակ	52.9	241.0	76.0	8.7	7.4	85.1	1.3
Սյունիք	72.3	208.6	1.2	5.8	1.1	19.0	4.6
Վայոց Ձոր	39.6	27.7	-	1.2	-	-	1.2
Տավուշ	75.7	60.5	-	1.9	-	-	1.9

Հանրապետության 48 քաղաքներից 26-ը (54.2%) կոյուղով հավաքված կեղտաջրերը առանց որևիցե մաքրման թափում են բաց ջրընդունիչներ /գետեր, ջրամբարներ և այլն/:

Վթարների քանակը կոյուղու համակարգում կազմել է 10433 միավոր, որից Երևան քաղաքում՝ 4318 կամ 41.4%:

Բաց թողնված կեղտաջրերից ստացված ֆինանսական ընդհանրացված ցուցանիշները, մլն. դրամ

Ընդամենը, մուտքեր	450.4
որից՝ վճարովի ծառայություններից	450.3
դրանից՝ բնակչությունից	197.5
Ընդամենը, ծախսեր	492.3
որից՝ նյութական ծախսեր	227.7

1999թ. հանրապետությունում կոյուղու համակարգում տարեկան դրամական մուտքերի 99.9%-ը կազմել են վճարովի ծառայություններից ստացվածը, որի 43.3%-ը բնակչությունից հավաքագրված դրամական մուտքերն են:

Երևան քաղաքի համար մեկ խոր. մետր ջրահեռացման դիմաց սահմանված սակագինը 2.5 դրամ է, իսկ մաքրման համար 7.5 դրամ: Այդ գները կիրառվում են ջրաչափերի առկայության դեպքում, իսկ դրանց բացակայության դեպքում, կիրառվում է ամսեկան վարձաչափ մեկ բնակչի հաշվով՝ 420 դրամ (345 դրամը ջրօգտագործման դիմաց վճարաչափն է, 18.75 դրամը՝ ջրահեռացման դիմաց, 56.25-ը՝ կեղտաջրերի մաքրման դիմաց վճարաչափն է):

Հանրապետությունում կեղտաջրերի հեռացումից և կեղտաջրերի մաքրումից տարիների ընթացքում կուտակվել է 3101.6 մլն. դրամի պարտք, որից բնակչությունից՝ 2393.0 մլն. դրամ կամ 77.2%, իսկ հաշվետու տարում՝ 887.6 մլն. դրամ, որից բնակչությունից՝ 790.7 մլն. դրամ կամ 89.0%: Պարտքերի 61.3%-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին: Հաշվետու տարում այդ ցուցանիշը կազմել է 61.7%: